ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ը ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ /Ք. ՖՈՒՃՈՈՒ/ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Միեր Խեչումյան

Արթուր Մանուկյան

2.Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի Տարածքային Կառավարման և Տեղական Ինքնակառավարման Հարցերի վարչության պետ

Ալավերդի համայնքի ղեկավարի օգնական

3.Գործուղման վայրը և ժամկետները.

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Ֆուծիան նահանգ, ք. Ֆուճոու , 2024 թվականի սեպտեմբերի 11-ից 27-ը:

4.Հրավիրող կողմը.

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Չինաստանի կառավարություն

5.Գործուղման նպատակը՝ (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից կազմակերպվող մարդկային ռեսուրսների զարգացման ոլորտում երկկողմ համագործակցության նախագծերի իրականացման նպատակով հատկացվող աջակցության շրջանակներում Ֆուծիան նահանգի արտաքին տնտեսական համագործակցության կենտրոնի նախաձեռնությամբ 2024 թվականի սեպտեմբերի 13-ից 26-ն ընկած ժամանակահատվածում Ֆուճոու քաղաքում «Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների համար տարածաշրջանային տնտեսական զարգացում» խորագրով դասընթացին:

6.Քննարկված թեմաները.

Գործուղման ընթացքում Ֆուծիան նահանգի արտաքին տնտեսական համագործակցության կենտրոնի համապատասխան դասախոսների և ծրագրի ղեկավարների ու պատասխանատուների կողմից ներկայացվել են ՉԺՀ տնտեսական դիվանագիտության առանձնահատկությունները: Դասախոսությունների ընթացքում առանձնացվել և ընդգծվել են ՉԺՀ նախագահ , Չինաստանի Կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Սի Ցզինպինի տնտեսական մտքերը, տնտեսական զարգացման հեռանկարները, կազմակերպվել են տեղում թեմատիկ այցելություններ:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայկական պատվիրակության կազմում էին 34 մասնակիցներ, մասնավորապես՝ ՀՀ ՏԿԵ նախարարության , ՀՀ Էկոնոմիկային նախարարության , մարզպետների աշխատակազմերի և համայնքապետարանների ներկայացուցիչներ:

Դասընթացի ընթացքում եղել են դասախոսություններ հետևյալ թեմաներով՝

- Չինաստանի տնտեսական դիվանագիտության առանձնահատկությունները, ՉԺՀ նախագահ ,Չինաստանի Կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Սի Ցզինպինի տնտեսական մտքերը
- Ֆուծիան նահանգի ազատ առևտրի գոտու պիլոտային տարբերակի արդյունավետության և զարգացման հեռանկարները
- Տեղում ծանոթացում զարգացման կետրոնին, ինչպես նաև «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» համագործակցության Ֆուծիան նահանգի օրինակին
- Չինաստանի տնտեսական զարգացման վերաբերյալ
- Թվային էկոնոմիկայի զարգացման կարևորությունը
- Միջազգային ներդրումների կառավարման առանձնահատկությունները
- Ազգային կամ տեղական մակարդակներում մրցունակության բարձրացման ռազմավարության վերաբերյալ
- Նորարարական տեխնոլոգիաներին և զարգացումներին տեղական մարմինների մասնակցության վերաբերյալ
- Շանհայ քաղաքում կազմակերպվեցին այցելություններ և ծանոթություն չինական հին և նոր ժամանակների ճարտարապետությանը

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ավարտելով Ֆուճոու քաղաքում «Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների համար տարածաշրջանային տնտեսական զարգացում» խորագրով դասընթացը՝ ելույթով հանդես եկավ Ֆուծիան նահանգի արտաքին տնտեսական համագործակցության կենտրոնի տնօրեն Խուան Անը: Հայաստանյան պատվիրակության ներկայացուցիչ Արտակ Ալբերտյանը հանդես եկավ շնորհակալական ելույթով: Մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10.Ստորագրությունը, ամսաթիվը՝

Միեր Խեչումյան

Արթուր Մանուկյան

01.10. 2024թ.